

## 2. ՀՅՈՒԲՇՄԱՆԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

### ՅՈՒ. ԳԱՔՐԻՆԵԼՅԱՆ

Պատմահամեմատական լեզվաբանության հիմնադրումից հետո, մինչև մեծ հայագետ Հայնրիխ Հյուբշմանի «Հնդեվրոպական լեզուների շրջանում հայերենի դիրքի մասին» հոդվածի լույս ընծայումը, հնդեվրոպաբանության մեջ հայերենը համարվում էր իրանական լեզու: Հիշյալ հոդվածը, որը լույս տեսավ 1875 թ., վերջ դրեց հայագիտության մեջ գոյություն ունեցող բոլոր հակասական և ոչ ճիշտ ենթադրություններին՝ հնդեվրոպական լեզվաբանության հայերենի գրաված դիրքի վերաբերյալ: Ինչպես այս հոդվածում, այնպես էլ իր մյուս ուսումնասիրություններում, Հյուբշմանը հիմնվելով հայերենում գոյություն ունեցող հնչյունական օրինաչափությունների վրա և առանձնացնելով բնիկ հայկական ու փոխառյալ բառերը, ապացուցեց, որ հայերենն առանձնահատուկ դիրք է գրավում հնդեվրոպական լեզուների շարքում, այդ լեզվաբանների մի ինքնուրույն անդամ է և շուրջ իր մերձավոր ցեղակիցը այդ լեզուների մեջ: Հնդեվրոպական լեզվաբաններում հայերենը նա տեղադրեց իրանական և սլավոնալիտվական լեզուների միջև: Հյուբշմանը հայերենի առանձնահատուկ բնույթը բացատրում էր, ելնելով Յոհ. Շմիդտի «ալիքների տեսությունից»՝ հայերենը համարելով կապող օղակ հիշյալ լեզվախմբերի միջև<sup>1</sup>:

Հյուբշմանի տեսությունն իր գիտական համոզիչ ուժով համընդհանուր ընդունելություն գտավ թե՛ հայագիտության և թե՛ ամբողջ հնդեվրոպաբանության մեջ: Դրանով հայերենի համեմատական ուսումնասիրության մեջ մի նոր՝ Հյուբշմանի դպրոցի հիմքը դրվեց:

Ընդհանրապես լեզվական ցեղակցության հարցը և նրա լուծման մեթոդները հանդիսանում են ընդհանուր և համեմատական լեզվաբանության այն «հավերժական» խնդիրներից մեկը, որին միշտ անդրադառնում են լեզվաբանները<sup>2</sup>, հատկապես կապված նոր հայտնաբերված լեզուների և նրանց լեզվական պատկանելության որոշման հետ: Այս հարցի կարևորությունն այն է, որ ցեղակից լեզուների համեմատական ուսումնասիրությունը ոչ միայն նպատակ ունի վերականգնել լեզվի հնագույն վիճակը, այլև զբաղվում է առանձին լեզուների կառուցվածքային տարրերի զարգացման օրինաչափությունների բացահայտմամբ: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է դառնում ճշգրտաբան ցեղակից լեզուների միջև փոխհարաբերությունը, ինչպես և կոնկրետ լեզվի զարգացման օրինաչափությունները:

Հյուբշմանի հետևորդները պաշտպանելով հայերենի ցեղակցության վերաբերյալ նրա տեսությունը, իրենց բազմակողմանի հետազոտություններով

<sup>1</sup> Հ. Հյուբշմանի մասին մանրամասն տե՛ս Է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հտ. 1, Ե., 1958, էջ 231—244:

<sup>2</sup> Макаев Э. А. Общая теория сравнительного языкознания. М., 1977, с. 67.

էլ ավելի ամրապնդեցին և կատարելագործեցին այն՝ հայերենի համեմատական ուսումնասիրութիւնը հասցնելով զարգացման բարձր աստիճանի:

Ընդհանուր առմամբ, հայագիտութեան մեջ կարելի է նկատել Հյուբշ-մանի տեսութեան զարգացման երեք հիմնական ուղղութիւններ: Առաջին ուղղութեան ներկայացուցիչները՝ Կ. Բրուզմանը, Հ. Օստհոֆը, Ք. Պատկանյանը, Հ. Տաշյանը և ուրիշներ, իրենց ուսումնասիրութիւններում ստուգաբանական, հնչյունաբանական և քերականական նորանոր օրինաչափութիւնների բացահայտումով էլ ավելի ամուր հիմքերի վրա դրեցին Հյուբշմանի տեսութիւնը: Մյուս երկու հիմնական ուղղութիւնների ներկայացուցիչները, այս ամենով հանդերձ, փորձեցին և փորձում են առավելագույն շահով ճշգրտել հայերենի փոխհարաբերութիւնը իր մերձավոր ցեղակիցների հետ: Երկրորդ ուղղութեան լեզվաբանները, ինչպես՝ Ա. Մեյեն, Հ. Պեդերսենը, Հ. Աճառյանը, է. Ադայանը, Գ. Զահուկյանը, Գ. Զոլտան և մյուսները իրենց ուսումնասիրութիւններում գտնում են, որ հնդեվրոպական լեզվաբանութեամբ հայերենի առավել մերձավոր ցեղակիցը հունարենն է: Երրորդ ուղղութեան ներկայացուցիչներ Զ. Բոնֆանտեն, Ի. Դյակոնովը, Օ. Հասսը, Վ. Գեորգիևը, Վ. Բընը-ցյանուն և ուրիշներ, հայերենին մերձավոր ցեղակից են համարում փոյուգերենը:

Իհարկե, բացի այս երեք հիմնական ուղղութիւններից կան նաև առանձին լեզվաբաններ, որոնք հայերենին մերձավոր ցեղակից են համարում հնդեվրոպական լեզվաբանութեան տարբեր լեզուներ: Որոշ լեզվաբաններ որպես հայերենի մերձավոր ցեղակից են անվանում թրակերենը, մյուսները՝ ալբաներենը կամ խեթերենը կամ այլ լեզուներ: Ա. Գլեյեն, օրինակ, սերտ կապ է տեսնում հայերենի և կելտերենի միջև<sup>3</sup>:

Այս առումով առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում սովետական լեզվաբան է. Մակաևի տեսակետը: Ապացուցելով համահնդեվրոպական վիճակի վերականգնման համար հայերենի մեծ նշանակութիւնը, նա գտնում է, որ «հայերենը կամուրջ է գցում արիական լեզուներից դեպի սլավոնալիտովականները և հունարենից՝ իտալական, կելտական և գերմանական լեզուները»<sup>4</sup>: Այսինքն, հնդեվրոպական լեզուների շրջանում հայերենը նա տեղադրում է կենտրոնում:

Առաջին ուղղութեան ներկայացուցիչներից հատկապես ուշադրութեան են արժանի Ք. Պատկանյանի ուսումնասիրութիւնները: Հյուբշմանի վերը նշված հոդվածի լույս ընծայումից հետո՝ 1879 թ., Պատկանյանը հանդես եկավ իր «Հնդեվրոպական լեզուների շրջանում հայերենի դիրքի մասին»<sup>5</sup> հոդվածով, որտեղ, հիմնվելով Հյուբշմանի տեսութեան վրա, հայերենի դիրքի որոշման համար առաջադրում է հետևյալ պայմանները.

1. Անհրաժեշտ է հայերենում առանձնացնել բոլոր այն բառերը, որոնք նմանվում են իրանական համապատասխան բառերին: Միաժամանակ նա առաջ է քաշում հունական, սիրիական և սեմիտական այն փոխառութիւնների անջատման հարցը, որոնք հայերենին են անցել քրիստոնեութեան ընդունումից հետո: Այդ ձևով առանձնացնելով գործածական բառերի մոտ մեկ երրորդը, Պատկանյանը ստանում է 3500—4000 բառ, որոնք արտաքին նմա-

<sup>3</sup> Глейе А. О месте армянского языка среди арио-европейских языков. Сборник материалов для описания местностей и племен Кавказа, 31, 4, Тифлис, 1902, с. 1—7.

<sup>4</sup> Макаев Э. А. Армяно-индоевропейские лексические изогlossen и ареальная лингвистика.— Zeitschrift für Phonetik, Sprachwissenschaft und Kommunikationsforschung, Bd. 20, N. 5/6, 1960, S. 449—464.

<sup>5</sup> Патканов К. О месте, занимаемом армянским языком в кругу индоевропейских. С.—Петербург, 1879.

նություններ շունեն մյուս լեզուների համապատասխան բառերի հետ: Նա գտնում է, որ այդ բառերի մի մասը, անտարակույս, փոխառություններ են, իսկ գերակշռող մասը՝ բնիկ հայկական բառեր, «Վերլուծելով բառերի վերջին խումբը, — ասում է նա, — նախ մենք կխուսափենք օտար բառերը որպես հայերեն ընդունելուց և ապա՝ կպարզենք հայոց լեզվի հնչյունական հիմնական գծերը և դրանց հարաբերությունը մյուս լեզուների նկատմամբ: Այդ ժամանակ պարզ կդառնա, որ առանձնացված բառերը, թեկուզ և նման օտար բառերին, պատկանում են հայերենին»<sup>6</sup>:

2. Համեմատելով հայերենը պարսկական բարբառների հետ, լեզվաբանները նկատի ունեն այն հնագույն և նոր իրանական բարբառները, որոնք ունեն գրականություն: Բայց բառերը մի լեզվից մյուսին են անցնում ոչ միայն գրականության միջոցով, այլև ավելի հաճախ մշտական կենդանի հաղորդակցության ժամանակ, իսկ հայերը կարող էին շփվել այնպիսի պարսկական ցեղերի հետ, որոնք անհայտ են լեզվաբաններին: Այստեղ Պատկանյանը առաջ է քաշում իրանական բարբառների ուսումնասիրության հարցը, քանի որ հընարավոր չէ վստահորեն խոսել այն բառերի մասին, որոնք պարսկերենից անցել են այլ լեզուների, եթե պատկերացում չունենք իրանական բարբառների փոխհարաբերության մասին: Ընդհանրապես Պատկանյանը լեզուների ցեղակցության հարցը պարզելու կարևոր նախապայման է համարում նրանց բոլոր բարբառների մանրակրկիտ ուսումնասիրությունը, որը քիչ է դբաղեցրել Հյուբշմանին, և այդ հանգամանքը ակադ. է. Աղայանը իրավացիորեն համարում է Հյուբշմանի տեսության եթե ոչ թերություններից, ապա պակասություններից մեկը<sup>7</sup>:

Պատկանյանը գտնում է, որ հիմնվելով միայն այն տարբերությունների վրա, որոնք ի հայտ են գալիս՝ հայերեն բառերը համապատասխան պարսկական բառերի հետ համեմատելիս, կարելի է ընկնել թյուրիմացության մեջ, կարծելով, որ այդ տարբերության մեջ է կայանում հայերենի յուրահատկությունը: «Ի վերջո, — ասում է նա, — կարող է պարզ դառնալ, որ ենթադրյալ հայերեն բառը բոլորովին էլ հայկական չէ, այլ պարսկական բարբառային բառ է, և այդ տարբերությունը առաջացել է ոչ թե հայկական, այլ պարսկական հիմքի վրա»<sup>8</sup>: Այդ պատճառով էլ բառապաշարի քննության ժամանակ դեռևս բավական չէ հենվել միայն գրավոր աղբյուրների վրա:

3. Լեզուն իր բարբառային ձևերի ամբողջությունն է, իսկ գրական լեզուն՝ դրանց պատահական դրսևորումը: Հայերենի ուսումնասիրության ժամանակ լեզվաբանները նկատի ունեն միայն Աստվածաշնչի հայերեն թարգմանության լեզուն:

Մինչդեռ, Պատկանյանի կարծիքով, այդ լեզուն պատահականորեն է դարձել գրական, բացի դրանից պետք է նկատի ունենալ նաև հայկական մյուս բարբառները՝ իրենց բազմաթիվ հնչյունական և քերականական յուրահատկություններով հանդերձ<sup>9</sup>:

Այս սկզբունքներից ելնելով, Պատկանյանը քննում է հայերենի և իրանական լեզուների փոխհարաբերությունը: Նա նշում է, որ այն լեզվաբանները, որոնք հայերենը համարում են իրանական լեզու, հիմնականում հիմնըվում են այն ընդհանուր տարբերությունների վրա, որ ցուցաբերում են հայերենը և իրանական լեզուները սանսկրիտի նկատմամբ: Նման ընդհանրություն է համարվում սանսկրիտի ի-ի անցումը շ-ի հայերենում և պարսկերե-

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 11:

<sup>7</sup> Է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հտ. 1, Ե., 1958, էջ 244:

<sup>8</sup> Патканов К. О месте..., с. 1.

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 12:

նում ինչպես՝ սնսկ. vah, mēha, bahu, lih ձևերին հայերենում համապատասխանում են վազ, մէզ, բազում, լիզել ձևերը: Այնուհետև, հայերեն այլ բառերում զ-ի փոխարեն դրվում է ս. սնսկ՝ ah, aham, հայ.՝ ես, ասել, որոնք կարծես թե առաջացել են եզ, ազել ձևերից:

Պատկանյանի կարծիքով, դեռևս շենք կարող պնդել, թե վերը բերված օրինակներում գործ ունենք բուն հայկական բառերի հետ, մանավանդ, որ ասել բառում զ-ից ս-ի անցման դեպքը չէ: Որպես այդ բանի ապացույց նա համարում է ահալ, ըհել բարբառային ձևերի առկայությունը: Նա սխալ է համարում նաև այն, որ լազարդը տեսանել բառը համեմատում է զենդերեն derez և հունարեն δερξ ձևերի հետ, այսինքն՝ հայ. ս-ի փոխարեն ունենք րջ և րք, որը ժխտում են հայերենում առկա տահալ, տեհել բարբառային ձևերը: Իսկ նախնական s-ի h դառնալը ավելի ակնառու է, երբ լատ. sorbeo ձևը համեմատում ենք ոչ թե հայերեն արբել ձևի հետ, ինչպես արել է Հյուբշմանը, այլ բարբառային հարբել ձևի հետ: Նույն կերպ նիսն. svasar-ին ավելի մոտ է բարբառային ֆուեբ, քան գրական ֆոյբ ձևը<sup>10</sup>:

Այսպիսով, նախքան հայերենի բնույթը որոշելը, անհրաժեշտ է բազմակողմանիորեն ուսումնասիրել նրա բոլոր բարբառները, եթե շենք ուզում, որ ուսումնասիրությունը միակողմանի բնույթ կրի, քանի որ բարբառներում պահպանվում են բազմաթիվ բնիկ բառեր, որոնք շկան գրական լեզվում:

Ելնելով Հյուբշմանի տեսությունից և իր ուսումնասիրություններից, Պատկանյանը գտնում է, որ հայերենը միջին դիրք է գրավում իրանական ու սլավոնալիտովական լեզուների միջև և հանդիսանում է հնդեվրոպական լեզուների անհետացած մի խմբի (հնարավոր է փոքրասիական) ինքնուրույն ներկայացուցիչը<sup>11</sup>:

Հյուբշմանի տեսությունն իր հետևողական կիրառման ու զարգացումը գտավ ֆրանսիացի լեզվաբան Ա. Մեյեի ուսումնասիրություններում: Մեյեն՝ հիմնվելով Հյուբշմանի դրույթի վրա, գտնում է, որ հայերենը Հայաստան բերված և նախկինում բոլորովին այլ լեզուներով խոսող բնիկների կողմից ընդունված հնդեվրոպական լեզու է: Պահպանելով հանդերձ ընդհանուր հընդեվրոպականի շատ գծեր և առաջին հայացքից հանդես գալով որպես սանսկրիտի, հունարենի, լատիներենի, սլավոներենի և այլոց ցեղակիցը՝ հայերենը ստացել է յուրահատուկ կերպարանք, որով նա խորապես տարբերվում է հնդեվրոպական ընտանիքի մյուս բոլոր լեզուներից: Միաժամանակ Մեյեն առաջ է քաշում հայերենի հետագա զարգացման մեջ կովկասյան ենթաշերտի ազդեցության գաղափարը և պատահականություն չի համարում այն, որ հայերենի ու վրացերենի բաղաձայնները գրեթե նույնական են, իսկ նրանց ձայնավորների միջև եղած տարբերությունը մեծ չէ<sup>12</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ Հյուբշմանը նույնպես գտնում էր, որ հայերենի հնչյունական համակարգը նմանություններ ունի վրացերենի հետ, սակայն այդ հանգամանքը նա չի համարում կովկասյան լեզուների ազդեցության ապացույց, քանի որ կովկասյան լեզուներից փոխառությունները մեծ թիվ չեն կազմում հայերենում: «Ավելի հավանական է, — ասում է Հյուբշմանը, — որ ազվաններից ու վրացիներից ավելի բարձր մշակույթ ունեցող հայերը ավելի շուտ կարող էին բառեր փոխ տալ, քան թե վերցնել»<sup>13</sup>:

Մեյեն ընդհակառակը՝ զգալի տեղ է հատկացնում կովկասյան լեզուների

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 24:

<sup>12</sup> Ա. Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978, էջ 17:

<sup>13</sup> Hübschmann H., Armenische Grammatik, Leipzig, 1897, S. 396.

ազդեցութեանը և ապացուցում, որ հայերենը դրա հետևանքով կտրուկ կերպով հեռացել է հնդեվրոպականից<sup>14</sup>։

Այսպես, պ, ա, կ և բ, դ, գ պայթական բաղաձայնները հայերենում կըրել են լրիվ տեղաշարժ, որտեղ հնդեվրոպական նախալեզուն *d* ունի, հայերենում այն ա է. օր., աասն թվականը համապատասխանում է decem հին ձևին, որպիսին կար լատիներենում. հմմտ. հայ. հայր, գոթ. fadar, լատ. pater: Քերականական ձևերը կարող ենք հանգեցնել հնդեվրոպական սկզբնաձևերին, սակայն նրանք հայերենում ստացել են նոր ձևավորումներ: Այսպես՝ հին հայերենում անհետացել է քերականական սեռը: Պահպանվել են բաղմաթիվ բառեր, ինչպես կով, որը ցույց է տալիս ց-ի անցումը կ-ի՝ հին ձևը ուներ ց, ինչպես սնսկ. gav ձևում: Հնդեվրոպական *ə*-ն առաջին վանկում դառնում է ա (հայր), ինչպես հունարենում, իտալակելտականում և գերմանականում, մինչդեռ այն *i* է դառնում հնդիրանականում և լետասլավականում: Միաժամանակ նույն ձայնավորը երկրորդ վանկում սզվում է, ինչպես իրանականում լետասլավականում և գերմաներենում՝ հայ. դուստր, գոթ. dauhtar, հ. սլավ. dŭšti, լիտ. duktė, մինչդեռ այն պահպանվում է սանսկրիտում, հունարենում և իտալակելտականում՝ սնսկ. duhita, հուն. θυγατήρ<sup>15</sup>։

Բազմաթիվ այլ փաստերով Մեյեն հաստատում է իր այն կարծիքը, որ հայերենն իր հնդեվրոպական ցեղակիցների հետ նմանութուններ ունենալով հանդերձ, միաժամանակ ցուցաբերում է էական տարբերություններ: Նա գալիս է այն եզրակացութեան, որ հայերենը հնդեվրոպական լեզուների շարքում ներկայացնում է մի առանձին ճյուղ, որը ոչ մեկից կախման մեջ չէ: Այն նույնքան առանձին է, որքան ավելի շատ խոսողներ ունեցող ճյուղերը, ինչպես գերմանականը կամ սլավոնականը<sup>16</sup>։

Քննարկելով հնդեվրոպական բարբառների փոխհարաբերության հարցը, Մեյեն գտնում է, որ արևելյան խմբի լեզուների մեջ հայերենը, որը պահպանում է *ǰ*-ի և *ǰ̄*-ի և *ǰ̄*-ի և *ǰ̄*-ի տարբերակումը, համեմատաբար մոտ է արևմրտյան խմբին՝ հատկապես հունարենին<sup>17</sup>։

Այս տեսակետը է՛լ ավելի դարգացրեց Կոպենհագենի համալսարանի պրոֆեսոր Զ. Պեդերսենը, որը հայերենի օրինակով առաջինը կասկածներ հայտնեց centum և satəm ճյուղերի լեզուների տարբերակման հարցում: Դեռևս 1904 թ. լույս տեսած իր «Հայերենը և հարևան լեզուները» հոդվածում Պեդերսենը՝ քննելով հայերենի հնչյունական ու ձևաբանական որոշ երևույթներ իրեն ցեղակից մյուս լեզուների համեմատությամբ, գալիս է այն եզրակացութեան, որ «հայերենը satəm լեզու մըն է. սակայն satəm լեռմաց մեջ բոլորովին եզական դիրք մը կգրավի և ասով ցույց կուտա թե centum և satəm լեզվաց միջև միհն այնչափ խորը չէ, որչափ հաճախ ընդունվի կուզվի»<sup>18</sup>։ Հայտնելով այն միտքը, որ հայերենն իր ցեղակիցներից առավել մոտ է կանգնած հունարենին, նա գտնում է, որ centum և satəm ճյուղերի լեզուների միջև հնչյունական տարբերություններն ավելի ուշ ժամանակի արդուներ են, քան այդ ճյուղերի բաժանումն է տեղի ունեցել<sup>19</sup>։

Իր կարծիքը Պեդերսենն ավելի ամրապնդեց 1929 թ. լույս տեսած իր «Հայերենի դիրքը» հոդվածում և այլ աշխատություններում: Այստեղ նա առանձին ուշադրություն է դարձնում այն հնչյունական և քերականական օրի-

<sup>14</sup> Ա. Մեյե, նշվ. աշխ., էջ 18։

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 14։

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 17։

<sup>17</sup> Meillet A., Les dialectes indoeuropéens, Paris, 1922, p. 133.

<sup>18</sup> Զ. Պեդերսեն, Հայերեն և դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 167։

<sup>19</sup> Նույն տեղում։

նաչափություններին, որոնք յուրահատուկ են հայերեն և հունարեն լեզուներին: Միաժամանակ նա քննում է այն երևույթները, որոնք ընդհանուր են հայերենի և նրան ցեղակից լեզուների համար: Պեղերսենը հաստատում է, որ հայերենում և հունարենում բազմաթիվ համապատասխան բառեր սկսվում են ձայնավորով, այն դեպքում, երբ ցեղակից մյուս լեզուներում նույն բանը չի նկատվում: Այդ երևույթը նա բացատրում է նրանով, որ հնդեվրոպական նախաձևում գոյություն ունեին կրկնաձևեր՝ ձայնավորով սկսվող և առանց դրան: Հայերենին և հունարենին հատուկ է հիմնականում առաջին ձևը. հմմտ. հայ. աստղ, հուն. α'στη'ρ, իսկ սնսկ. star, լատ. stella կամ հայ. այր, հուն. α'νη'ρ, երբ սնսկ. nar, հմմտ. լատ. Nerō, կամ \*η'ρω' էնթադրվում է հուն. ε'νεα, ε'νενη'κοντα, հայ. հնն, իսկ սնսկ. nava, լատ. novem և այլն: Նույն կերպ հնդեվրոպական pt-ով և p-ով սկսվող կրկնաձևերից այս երկու լեզուներում էլ հանդիպում է հիմնականում pt-ով սկսվող ձևերը՝ եթե նկատի ունենանք, որ pt-ն հայերենում համապատասխանում է ք-ին. հմմտ. πτερόν = փետուր, πτε'ρουξ = քել, իսկ հ. սլ. pero = փետուր. սնսկ. parjam = թռիչք, թել թերթ, հ. գերմ. varn = (Farnkraut), ձարխոտ և այլն:

Քննարկելով բազմաթիվ այլ օրինաչափություններ, որոնք ընդհանուր են հայերենի և նրան ցեղակից լեզուների համար, Պեղերսենը ճշգրտում է Հյուբշմանի սահմանած հնչյունական օրենքները: Որոշ դեպքերում նա առաջարկում է իրենը, ինչպես. օրինակ, նա համաձայն չէ Հյուբշմանի այն դրույթին, որ հնդեվրոպական v-ն հայերենում անփոփոխ է մնացել: Պեղերսենի կարծիքով, հ. ե. v-ն բառասկզբում դառնում է գ, իսկ բառավերջում լինում է վ, յ, իսկ բառավերջում երկու ձայնավորների միջև դառնում է կրկին գ (օր. կով, կոգի)<sup>20</sup>:

Հիմնվելով Հյուբշմանի ստուգաբանությունների վրա և դրանց ավելացնելով իրենը, Պեղերսենը պարզում է, որ հայերենն իր ցեղակիցներից հունարենի հետ համապատասխանություններ ունի 95 դեպքում, հնդիրանականի հետ՝ 53, սլավոնալիտականի հետ՝ 14, գերմանական լեզուների հետ՝ 10 և իտալականի հետ՝ 10: Հյուբշմանի տվյալներով այդ թվերը համապատասխանաբար լինում են՝ 59, 37, 14, 10, 10<sup>21</sup>: Այսինքն, այս հաշվարկները նույնպես ապացույց են հայերենի և հունարենի սերտ կապի:

Հյուբշմանի և Մեյեի տեսությունը բազմակողմանիորեն քննվեց ու ամբողջացվեց այս ուղղության խոշորագույն ներկայացուցիչ, հայ լեզվաբանության մեծ երախտավոր Հ. Աճառյանի կողմից: Նա իր ուսումնասիրություններով անխոցելի դարձրեց այդ տեսությունը և, որ այն մինչև օրս մնում է անսասան, դրանում մեծ վաստակ ունի Հ. Աճառյանը: Չանդրադառնալով հայագիտության և ընդհանրապես լեզվաբանության մեջ եղակի երևույթներ հանդիսացող նրա «Հայերեն արմատական բառարան», «Լիակատար քերականություն հայոց լեզվի» և այլ աշխատություններին, նշեք այն հիմնական գծերը, որոնք բնորոշում են Հյուբշմանի տեսության դարգացումը Հ. Աճառյանի ուսումնասիրություններում:

Հնդեվրոպական նախաձևի մերականգնման համար Աճառյանը, Հյուբշմանի նման, մեծ տեղ է տալիս հայերենին, քանի որ նախնական բազմաթիվ ձևեր հնարավոր է մերականգնել միայն հայերենի օգնությամբ, օր.՝ aruau-սուֆ և aruour բառերի հ. ե. նախաձևն է drak'ru, որից կրճատմամբ առաջացել է երկրորդական dak'ru ձևը, իսկ հետո d-ի անկումով՝ ak'ru: Վերջինից ծագել են արիական և բալթյան ձևերը, իսկ հայերենը պահպանել է նախ-

<sup>20</sup> Հ. Պեղերսեն. Նպատ մը հայ լեզուի պատմութեան, Վիեննա, 1904, էջ 1:

<sup>21</sup> Հ. Պեղերսեն. Հայերէնի դիրքը, «Հանդես ամսօրյա», 1929, № 2, էջ 186:

նական drak'ru ձևը, որը շրջամամբ դարձել է նախ rdak'ru, հետո aruawar > aruawar: Կամ՝ «գար» հ. ե. արմատը ենթադրվում է միայն հայերենի միջոցով (wā), մյուս լեզուներում առկա է միայն wādh ածականը՝ լատ. vādere, գերմ. waten<sup>22</sup>:

Անվերապահորեն ընդունելով Հյուբշմանի կողմից հայտնաբերած և կիրառած հնչյունական ու ստուգաբանական օրինաչափությունները, իրանական փոխառությունների հարցում Աճառյանը գտնում է, որ «երբ մի հայերեն բառ ձիշտ տառադարձություն մը և տառ առ տառ ծածկում է իրանական համապատասխան բառը, անշուշտ փոխառություն է, իսկ երբ ներկայացնում է մեծ ու փոքր շեղումներ և հատկապես տառադարձության տարբերություն, ուրեմն բնիկ հայկական է»<sup>23</sup>: Նույն կերպ է նա մոտենում նաև այլ լեզուներից կատարված փոխառություններին: Բառի ծագումը որոշելու լավագույն միջոցը նա համարում է ստուգաբանությունը: Եթե մի որևէ հայերեն բառ ստուգաբանվում է իրանական արմատով և իրանական ածանցումով, այսինքն՝ ունի իրանական կազմություն, բնիկ է պարսկերենում և փոխառյալ է հայերենում: Օրինակ, կամֆ բառը գրեթե նույն ձևով կա թե՛ հայերենի և թե՛ իրանական լեզուների մեջ. հմմտ. պհլ. kām, օս. k'om, պրս. kām, ղնդ. kāma (կամք, փափագ), հայերենում այս բառը արմատ է, իսկ իրանականները ծագում են kā արմատից. հմմտ. ղնդ. kā (ցանկանալ, փափագել): Ուրեմն հայերենում այն փոխառյալ է, որը հաստատվում է հնչյունական օրենքներով. եթե հայերեն արմատը բնիկ լիներ, կ-ի դիմաց պետք է ունենայինք պրս. ց: Նմանապես ուխտ բառը, որը առկա է նաև իրանական լեզուներում՝ ղնդ. uxta, որը vač, vak (խոսել) արմատի անցյալ դերբայն է, հայերենում ոչ մի կերպ չի բացատրվում, հետևաբար փոխառություն է պարսկերենից:

Աճառյանը ճշգրտում է նաև պարսկական տարբեր փոխառությունների ժամանակաշրջանը, գտնելով, որ փոխառությունների մեծ մասը, հատկապես այն բառերը, որոնք մեր լեզվագագացողությամբ ավելի հարազատ բառեր են համարվում, փոխ է առնված հին արշակունյան կամ պարթևական շրջանից և ոչ սասանյան<sup>24</sup>:

Համեմատելով հայերենը և մյուս ցեղակիցները միմյանց հետ, Աճառյանը պարզում է, որ հնխ. k<sup>1</sup>, k<sup>2</sup> հնչյունների դիմաց հունարենը, իտալական, կելտական, գերմանական լեզուները կոկորդայիններ ունեն, իսկ հայերենը, ալբաներենը, փուլգերենը, արիական և սլավոնալիտական լեզուները k<sup>1</sup>-ի դիմաց ունեն շականներ և k<sup>2</sup>-ի դիմաց՝ կոկորդայիններ, օր.՝ հնխ. k'mtō, «հարյուր» բառի դիմաց ունենք սնսկ. čatām, պրս. sat, ռուս. сто և մյուս կողմից՝ լատ. centum, հուն. hekatōn, թոխ. kānt, գոթ. hund և այլն: Կամ՝ հնխ. kērdi, «սիրտ», լիտ. širdis, ռուս. сердце, հայ. սիրտ և մյուս կողմից՝ հուն. kardia, լատ. cor, cordis, անգլ. heart, գերմ. Herz և այլն:

Հնխ. a և o ձայնավորները անփոփոխ են մնում հունարենում, հայերենում, փուլգերենում, ինչպես նաև իտալական և կելտական լեզուներում, երբ արիական, բալթյան, գերմանական լեզուներում և ալբաներենում երկուսն էլ դառնում են a, իսկ սլավերենում՝ o, որը դարձյալ նշանակում է a, օր., հնխ. agō «ածեմ», հուն. agō, սնսկ. aŷami, հայ. ածել և այլն:

Նույն կերպ ներկայացնելով ցեղակից լեզուների միջև գոյություն ունեցող բազմաթիվ հնչյունական համապատասխանություններ և տարբերություններ, Աճառյանը անդրադառնում է նաև քերականական երևույթներին,

<sup>22</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 1, Ե., 1940, էջ 82:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 228:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 230—235:

գտնելով, որ հ. ե. բայերի կատարյալ ձևի Ե նախահավելվածը պահպանվել է հունարենում, հայերենում և արիական լեզուներում, օր., բերեմ բայի կատարյալի եզակի երրորդ դեմքում ունենք. հուն. ephere, սնսկ. ábharat, հայ. եբեր: Ներկայի ye մասնիկը արիական լեզուները և հունարենը պահպանում են, երբ հայերենը և սլավոնալիտական լեզուները վերածում են նաև յ-ի, իսկ գերմանական, կելտական, իտալական լեզուներում այն ընդհանրապես անհետանում է: Այնուհետև, հայերենը, հունարենը և իտալական լեզուները գոյականների մեջ ունեն օ վերջավորություններ իգականներ, որը հին հնդեվրոպական ծագում ունի, օր., հնիս. snusó, հուն. nuós, լատ. nurus, հայ. նու «հարս», իսկ մյուս լեզուները կամ չնջել են այդ օ-ն, կամ դարձրել a և այլն<sup>25</sup>:

Այս ձևով ներկայացնելով ցեղակից լեզուների միջև համապատասխանությունների 16 կետեր, Աճառյանը գտնում է, որ այդ 16 կետերից 3-ում պարզ չէ, թե հայերենը ինչ դիրք է գրավում, մնացած 13-ից 10 դեպքում միանում է արիականին, 8-ում՝ հունարենին, 5-ում՝ սլավոներենին, 3-ում՝ կելտական և 2-ում՝ գերմանական լեզուներին: Միաժամանակ նա ներկայացնում է հայերենում պահպանված 713 ստուգաբանված բառեր, որոնցից 166-ը ընդհանուր են արիական, իտալական, գերմանական, կելտական, սլավոնալիտական լեզուների և հունարենի հետ: Համեմատով դ բառերի քանակով առաջինը հունարենն է (524 բառ), ապա արիական և սլավոնալիտական լեզուները (432-ական բառ)<sup>26</sup>:

Այսպիսով, Աճառյանը հաստատում է Մեյերի տեսակետը, գտնելով, որ հնդեվրոպական լեզուներից հայերենի առավել մերձավոր ցեղակիցը հունարենն է: Նա հայերենի ու հունարենի սերտ կապի նշան է համարում ոչ միայն այն բառերը, որոնք երկու լեզվում էլ առկա են նման ձևով կամ նույն իմաստով, այլև այն բառերը, որոնք թեև բոլոր լեզուներում կան, սակայն հավասարապես բացակայում են հայերենում և հունարենում, ինչպես օրինակ, հնիս. wíros «մարդ, տղամարդ», որից սնսկ. vīra, զնդ. vīra, լիտ. výras, լատ. vir, գոթ. vair և այլն: Հայերենում մարդ բառը ծագել է հնիս. mrtō ձևից, որի արմատն է mer—«մեռնել», հուն. μορτός, βροτός «մահկանացու, մարդ»<sup>27</sup>: Աճառյանը հայերենի և հունարենի առավել մերձավորության նշան է համարում նաև հայցականի վերջավորությունը այդ երկու լեզուներում: Հայերենում թեև անհետացել Է այդ վերջավորությունը, սակայն քան (=լատ. quam) և ձիւն (=լատ. hiems) ձևերը վկայում են, որ հայերենը հունարենի նման հայցականում ունեցել է ո վերջավորություն:

Հայերենի մերձավոր ցեղակիցի հարցում Մեյերի և Աճառյանի տեսակետին է նաև ազդ. է. Աղայանը, որն իր հնչյունաբանական և ստուգաբանական բազմաթիվ ուսումնասիրություններով մեծ ներդրում ունի Հյուբշմանի տեսության զարգացման մեջ: Հատկապես ուշադրության է արժանի է. Աղայանի «Գրաբարի քերականությունը»<sup>28</sup>, որտեղ նա քննել է գրաբարի հնչյունական համակարգը համաժամանակյա մոտեցմամբ:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում այս ուղղության ներկայացուցիչ, ավստրիացի լեզվաբան Գ. Զոլտայի «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում»<sup>29</sup> աշխատությունը, որտեղ նա փորձել է ճշգրտել հայերենի բարբառային հարաբերությունը իր մյուս ցեղակիցների նկատ-

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 23—28:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 85:

<sup>27</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. 3, Ե., 1977, էջ 279:

<sup>28</sup> Է. Աղայան, Գրաբարի քերականություն, Ե., 1964:

<sup>29</sup> Solta G., Die Stellung des Armentschen im Kreise der indogermanischen Sprachen, Wien, 1960.



մամբ: Չթերագնահատելով հնչյունական օրինաչափությունների դերը, նա ցեղակից լեզուների միջև բարբառային տարբերությունների բացահայտման գործում առավելությունը տալիս է բառապաշարին: Զուտան հնդեվրոպական ծագում ունեցող 458 բառերը բաժանում է չորս հիմնական խմբերի: Առաջին խմբում (A) ընդհանուր հնդեվրոպական զուգահեռներն են (89 բառ): Երկրորդ խմբում (B) այն բառերն են, որոնք վկայված են հնդեվրոպական լեզուների մեծ մասում (174 բառ): Երրորդում (C) բառային այն նույնություններն են, որոնք ընդգրկում են առավել թվով լեզուներ (123 բառ) և չորրորդում (D) այն բառերը, որոնք կապում են հայերենը և մեկ այլ լեզու (72 բառ): Ամբողջ բառապաշարը ներկայացվում է բառա-իմաստային խմբերով, որոնք ընդգրկում են կյանքի տարբեր բնագավառներ:

Քանի որ աշխատանքի վերջնական արդյունքում հաստատվում է հնդեվրոպական լեզուների շարքում հայերենի և հունարենի սերտ կապը, ավելորդ չենք համարում ներկայացնել մի քանի բառային համապատասխանություններ. Կենդանիների անվանումներ՝ հայ. այծ = հուն. αἴξ, յուպոպ = ἔπιψ, լոր = λαός և այլն, մարմնի մասերի անվանումներ՝ ոնգունք = εὐρυκος, ափ = ἀφή, տնային տնտեսությունում գործածվող բառեր՝ ավելում = οὐφέλλω, եփեմ = ἔψω և այլն, ծառերի անվանումներ և այլ բառեր՝ թեղի = πτελέα, սին = κενεός, ծուռ = νυγός, սուտ = φυδός:

Այս ձևով Զուտան ներկայացնում է 53 բառային համապատասխանություններ, որոնք իրենց բառային, բառակաղմական կամ հնչյունական հատկանիշերով հակադրվում են մյուս հնդեվրոպական լեզուների համապատասխան բառերին:

Ելնելով իր ուսումնասիրության փաստական նյութից, Զուտան հնդեվրոպական լեզուները, ըստ հայերենի նկատմամբ ունեցած մերձավորության աստիճանի, դասակարգում է հետևյալ կերպ.

- |                        |                      |
|------------------------|----------------------|
| 1. Հունարեն            | 6. Լատիներեն         |
| 2. Հին հնդկերեն        | 7. Իրանական լեզուներ |
| 3. Գերմանական լեզուներ | 8. Կելտական լեզուներ |
| 4. Բալթյան լեզուներ    | 9. Ալբաներեն         |
| 5. Սլավոններեն         | 10. Թոխարերեն        |

11, 12, 13, 14. Փոլոզերեն, թրակերեն, իլլիրերեն, խեթերեն<sup>30</sup>:

Այս բոլոր թյունը ներկայացնող ժամանակակից լեզվաբաններից իր բաշխմամբ ուսումնասիրություններով հայտնի է ակադ. Գ. Զահուկյանը: Հիմք ընդունելով Հյուբշմանի և վերը նշված մի քանի լեզվաբանների դրույթները և դրանք հարստացնելով իր հնչյունաբանական, ստուգաբանական և քերականական նոր հետազոտություններով, Գ. Զահուկյանը ճշգրտել և կոնկրետացրել է հայերենի ու նրան ցեղակից հին հնդեվրոպական լեզուների փոխհարաբերությունը<sup>31</sup>: Ուշադրության է արժանի Գ. Զահուկյանի կողմից գրաբարի բնորոշ գծերի վերհանումը, որի անհրաժեշտությունը առաջ էր բաշխել դեռևս Հյուբշմանի կողմից<sup>32</sup>:

Գ. Զահուկյանը գրաբարը բնութագրում է հետևյալ հիմնական գծերով.

ա) Հնչյունական համակարգը բնութագրում են բաղաձայնների եռաստիճանությունը, ձայնավորների մենաբարբառային, երկրաբառային և եռաբարբառային տիպերի առկայությունը: Գրությունը լիովին համընկնում է

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 114—115:

<sup>31</sup> Գ. Զահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Ե., 1970:

<sup>32</sup> Hübschmann H., Armenische Grammatik, S. 339.

արտասանության հետ: Բարբառներում հավանաբար կան տարբերությունների գրաբարից:

բ) Շեշտը հիմնականում վերջնավանկային է: Բառակազմական-բառափոխական փոփոխությունների ժամանակ շեշտափոխությունն առաջ է բերում վերջնավանկի մեկնաբարբառների, երկբարբառների և եռաբարբառների հետևյալ փոփոխությունները՝ ու > ը կամ զրո, ի > ը կամ զրո, է > ի, ոյ > ու, եա > ե, եայ > է:

գ) Հոլովման և խոնարհման համակարգերը բնութագրվում են բուն վերջավորություններից առաջ ա, ե, ի, ո, ու ձայնավորների առկայությամբ, որոնք հոլովման մեջ տարբերում են հոլովման տիպերը կամ հոլովումները, խոնարհման մեջ՝ խոնարհման տիպերը կամ լծորդությունները. ձայնորդով (ր, ղ՝ կամ ն) վերջացող անունների դեպքում այդ ձայնավորները ընկնում են ր-ից, ղ-ից կամ ն-ից առաջ:

Սակայն կան այս համակարգի խախտման երևույթներ՝ լծորդությունների և հոլովումների փոխանցումներ, բառավերջի ն-ի անկման հետևանքով ներքին թեքման փոխարինում արտաքինով:

դ) Հոլովման համակարգը բնութագրվում է ուղղական և հայցական հոլովների որոշակի տարբերակումով, առանձին հոլովական իմաստները տարբերակելու մեջ գ, ի, առ, ց, ըստ, ընդ նախդիրների խաղացած կարևոր դերով և այլն<sup>33</sup>:

Ենելով հայերենի այս յուրահատկություններից և միաժամանակ հայերենն իր ցեղակիցների հետ կապող ու հակադրող բազմաթիվ հնչյունաբանական, քերականական երևույթներից, Զահուկյանը դեռևս իր «Հայոց լեզվի նախագրային շրջանի ուրվագծեր» աշխատությունում ընդունում է, որ հայերենի բարբառային հիմքը միջին դիրք է զբաղում հնդեվրոպական բարբառների մեջ և առավել սերտ կապեր ունի մի կողմից՝ իրանական, մյուս կողմից՝ հունարեն ու փոյուգերեն լեզուների հետ: Նա գտնում է նաև, որ այն կարծիքը, թե հայերենը ու փոյուգերենը նախապես մի ամբողջություն էին կազմում, ապացուցված համարել չի կարելի<sup>34</sup>: Իր հետագա ուսումնասիրություններում Գ. Զահուկյանը այս տեսակետը հիմնավորում է նոր փաստարկներով:

Հնդեվրոպական լեզուների շրջանում հայերենի դերքը պարզելու համար նա օգտվում է ստատիկ վերլուծության մեթոդից և բացի դրանից կատարում է հատուկ ուսումնասիրություններ, կիրառելով որոշակի քանակով հնչյունական (27), ձևաբանական (35) և բառային (1360) իզոգլոսներից կազմված աղյուսակներ: Այդ իզոգլոսներից առանձնացվում են կարևորագույն 16 հնչյունական, 16 քերականական և 86 բառային միավորներ: Հաշվարկները ցույց են տալիս, որ ըստ հնչյունական մերձավորության, հայերենին ավելի մոտ է հունարենը, իսկ ըստ հնչյունական կարևորագույն իզոգլոսների՝ փոյուգերենը: Այնուհետև, ըստ քերականական մերձավորության, ինչպես նաև ըստ քերականական կարևորագույն իզոգլոսների, հայերենին առավել մոտ են հնդկական լեզուները:

Հնչյունական և քերականական կարևորագույն իզոգլոսների ընդհանուր հաշվարկով, ըստ հայերենի նկատմամբ մերձավորության աստիճանի, Զահուկյանը հնդեվրոպական կարևորագույն լեզուները դասակարգում է հետևյալ կերպ.

<sup>33</sup> Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը, Ե., 1956, էջ 73—74:

<sup>34</sup> Джаукян Г. Б. Очерки по истории дописменного периода армянского языка, Ереван, 1967, с. 46—47.

- |                            |   |
|----------------------------|---|
| 1. Հունարեն                | 7. Սլավոնական                           |
| 2. Հնդկական լեզուներ       | 8. Իտալական                             |
| 3. Փոյուգերեն              | 9. Կելտական                             |
| 4. Խեթա-լուվիական լեզուներ | 10. Բալթյան                             |
| 5. Թոխարական               | 11. Ալբաներեն                           |
| 6. Իրանական                | 12. Գերմանական լեզուներ <sup>35</sup> : |

Եթե համեմատենք Գ. Զոլտայի դասակարգման հետ, ապա կտեսնենք, որ Գ. Զասուկյանի մոտ գերմանական լեզուները իրենց հնչյունական և բառային իզոգլոսներով ավելի հեռու են հայերենից, իսկ խեթա-լուվիական, թոխարական և փոյուգերեն լեզուները՝ ավելի մոտ:

Հայ-հունական բառային իզոգլոսներին նվիրված առանձին աշխատանք ունի նաև ժամանակակից լեզվաբաններից Մ. Հարությունյանը<sup>36</sup>:

Հաջորդ ուղղութիւնը, որը ներկայացնում են ավելի սակավաթիվ լեզվաբաններ, գտնում է, որ հնդեվրոպական լեզուներից հայերենի ամենամերձավոր ցեղակիցը փոյուգերենն է:

Հայ-փոյուգերական սերտ կապի մասին վկայութուններ կային դեռևս հին հունական պատմագիրների, մասնավորապես, Հերոդոտի գործերում: Ելնելով Հերոդոտի վկայութուններից և բացահայտելով որոշ օրինաչափութուններ, որոնք ընդհանուր են այդ երկու լեզուների համար՝ ինչպես a, e, o ձայնավորների և τ, λ բաղաձայնների տարբերակումը, Պ. Կրեշմերը եզրակացրեց, որ հայերենը փոյուգերական ճյուղի լեզու է<sup>37</sup>:

Այս կարծիքը սկզբում ընդունելութուն չգտավ, օրինակ, Հյուբշմանը գտնում է, որ մեզ հասած փոյուգերենի լեզվական նյութի աղբատության պատճառով չի կարելի խոսել հայերենի և փոյուգերենի մերձավոր ցեղակցության մասին<sup>38</sup>: Հ. Աճառյանի կարծիքով, «հայերը թրակո-փոյուգերականից անկախ մի ցեղ են. նախապես բնակվել են Թրակիո սահմաններում և այդ ժողովուրդների հարևանության մեջ, թրակո-փոյուգերական շարժումից առաջ կամ հենց դրա պատճառով Թրակիայից անցել են Փոքր Ասիա, իրենց հետամնաց մասերը շփման մեջ են եղել փոյուգերացոց հետ և թերևս ընդունել են նրանց լեզուն, բայց բուն հառաջընթաց մասը, որ վերջապես եկել հաստատվել է Հայաստանում, որն է կապ շունի նրանց հետ»<sup>39</sup>:

Կրեշմերից և Մաչերից հետո հայերենի ու փոյուգերենի մերձավոր ցեղակցության օգտին արտահայտվեց Զ. Բոնֆանտեն<sup>40</sup>:

Այս առումով ուշադրության են արժանի Օ. Հասսի ուսումնասիրութունները: 1939 թ. լույս տեսած իր «Փոյուգերական լեզվական մնացորդների և հայերենի հետ նրանց փոխհարաբերության մասին» հոդվածում նա բազմաթիվ նմանութուններ է նկատում հայերենի և փոյուգերենի միջև: Հիմնվելով իր հետազոտութունների վրա, Օ. Հասսը գտնում է, որ սխալ է այն կարծիքը, որով մերժվում է հայերենի և փոյուգերենի մերձավոր կապի տեսակետը<sup>41</sup>:

<sup>35</sup> Джаукян Г. Г. Сравнительная грамматика армянского языка. Ереван, 1982, с. 202—205.

<sup>36</sup> Джаукян Г. Б., Сараджева Л. А., Арутюнян Ц. Р. Очерки по сравнительной лексикологии армянского языка. Ереван, 1983, с. 221—322.

<sup>37</sup> Kretschmer P., Einleitung in die Geschichte der Griechischen Sprache, Göttingen, 1896, S. 208.

<sup>38</sup> Hübschman H., Armenische Grammatik, S. 405.

<sup>39</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմութուն, մաս 1, էջ 133:

<sup>40</sup> Bonfante G., Armentans and Phryglans, Armenian Quarterly, i, 1946, p. 82—97.

<sup>41</sup> Haas O., Über die phrygischen Sprachreste und ihr Verhältnis zum Armentischen, «Հանդես ամսօրյա», № 7—12, 1939, էջ 226—235.

Հաասը ընդունելով, որ հայերենը satəm ճյուղի լեզու է, իսկ փոյուգե-  
րենը՝ centum, պարզում է, որ այս երկու լեզուներում էլ բաղաձայնների տե-  
ղաշարժը նույն կերպ է ընթացել, մասնավորապես հնդեվրոպական ք-ն չի  
դարձել ք', ինչպես սպասվում էր, այլ՝ հ, որը (հատկապես օ-ից առաջ) կա-  
րող է անհետանալ: Բացի դրանից բավականին նման է անցումը ձայնեղնե-  
րից պարզերի: Նա ապացուցում է, որ նխն. օ-ն երկու լեզուներում էլ դար-  
ձել է u, օր., հայ. տուրք, հուն. δῶρον, փոյուգ. doumō: Բառավերջի m-ն  
հայերենում, փոյուգերենում և հունարենում դարձել է n՝ հայ. քան, փոյուգ.  
kakoun, իսկ լատ. quam: Երկու լեզուներում էլ sm բաղաձայնական խումբը  
պարզեցվել է m-ի: Հաասը հատկապես նշում է հնդեվրոպական eu-ի անցու-  
մը ov-ի՝ հայ. ոյ-ին զուգահեռ, ինչպես նաև նախաշեշտ վանկերի i-ի և u-ի  
թուլացումն ու սղումը, որ նա համարում է ընդհանուր միտումի իրականա-  
ցում՝ միևնույն լեզվամիություն սահմաններում<sup>42</sup>: Այս բոլորի հետ մեկտեղ  
Հաասը ներկայացնում է այն տարբերությունները, որոնք գոյություն ունեն  
հայերենի և փոյուգերենի միջև:

Ամփոփելով փոյուգերենի փաստերը, առանձնացնելով աշխարհագրա-  
կան և ժամանակագրական տարբեր շերտեր, Ս. Հաասը գտնում է, որ խոսք  
կարող է լինել հայերենի և նախափոյուգերենի մերձավոր ցեղակցության մա-  
սին: Նշելով, որ հայկական և փոյուգիական արձանագրությունների լեզվի  
միջև հատուկ մերձավորություն չի նկատվում, նա սերտ կապ է տեսնում հա-  
յերենի և փոյուգա-պիսիդական սահմանային շրջանի լեզվական մնացորդնե-  
րի միջև: Նրա կարծիքով, նախափոյուգերենի մնացորդները, պահպանված  
լինելով Փոյուգիայի եզրամասերում, ցույց են տալիս, որ իրոք հնարավոր էր  
նախափոյուգերենի և նրա արևելյան հարևանը հանդիսացող հայերենի գո-  
յակցությունը փոյուգերենի տարածման հարավ-արևելյան եզրամասերում<sup>43</sup>:

Այս ուղղությանը հարող ի. Դյակոնովը գտնում է, որ հայերենն իր հիմ-  
նական բառային ֆոնդով թրակա-փոյուգիական ճյուղին պատկանող հնդեվ-  
րոպական լեզու է, սակայն նա չի առաջացել ոչ փոյուգերենից և ոչ էլ թրա-  
կերենից, այլ իրենից ներկայացնում է մի ինքնուրույն ճյուղավորում<sup>44</sup>:

Բուլղարացի լեզվաբան Վ. Գեորգիևը, ելնելով այն փաստից, որ հայե-  
րենն իր որոշ առանձնահատկություններով մոտ է հունարենին և, որ փոյու-  
գիացիները նախկինում եղել են հույների հարևանները, ենթադրում է, որ  
նախկինում հունարենը և փոյուգերենը հանդիսացել են շատ մոտ ցեղակից  
լեզուներ կամ միևնույն լեզվի տարբեր բարբառներ: Բալկանյան թերակղզու  
կենտրոնական մասից տեղափոխվելով դեպի արևելք՝ հարավային Թրակիա և  
Փոքր Ասիայի հյուսիս-արևմտյան մաս, փոյուգերենը ձեռք է բերել թրակյան  
ենթաշերտ: Հենց այդ ենթաշերտն էլ պատճառ է դարձել բաղաձայնների տե-  
ղաշարժի թե՛ փոյուգերենում և թե՛ հայերենում, քանի որ տվյալ երևույթը  
թրակերենում ավելի հին է, քան այդ երկու լեզուներում<sup>45</sup>:

Գեորգիևը՝ համեմատելով հայերենի և փոյուգերենի հնչյունական հա-  
մակարգերը հնդեվրոպականի հետ, ստանում է հետևյալ արդյունքը.

<sup>42</sup> Haas O., Zur Vorgeschichte der armenischen Sprache, «Հանդես ամսօրյա», 1961, 10—12, էջ 600.

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 602:

<sup>44</sup> Дьяконов И. М. Хетты, фригийцы и армяне. Переднеазиатский сборник, 1961, с. 367.

<sup>45</sup> Георгиев В. И. Передвижение смычных согласных в армянском языке и вопро-  
сы этногенеза армян.—Вопросы языкознания, 1960, № 5, с. 37.

չ. Յ.	փոյուզերենում	հայերենում
o	o	o
ē	e, i	i
ō	o, u	u
eu	eu	(eu >) oy
l, r	al, ar	al, ar

ձայնեղներ	խուլեր	խուլեր
խուլեր	շնշեղ-ձայնեղներ	շնշեղ-ձայնեղներ
g <sup>h</sup>	(d) z	j, z
s—	(h) ø	h, ø (զրո)
sw—	(h), w	v—, g <sup>46</sup> :

Ելնելով իր ուսումնասիրություններից, Վ. Գեորգիևը եզրակացնում է, որ հայերենը ներկայացնում է փոյուզերենի հետագա զարգացումը կամ ծայրահեղ դեպքում՝ հայերենը և փոյուզերենը միևնույն ընդհանուր լեզվի բարբառներն են<sup>47</sup>: Նրա կարծիքով, հայերենում առկա է նաև միզիական (հնարավոր է և թրակյան) բաղադրիչը<sup>48</sup>:

Ինչպես վերևում նշվեց, ակադ. Գ. Զահուկյանն իր ուսումնասիրություններում անդրադարձել է նաև հայերենի և փոյուզերենի փոխհարաբերությանը և գտնում է, որ հնչյունական կարևորագույն հատկանիշներով փոյուզերենը բավականաչափ մոտ է հայերենին<sup>49</sup>:

Ամփոփելով ասվածը, նշենք, որ այս ուղղություններից ներկայումս իշխող է հանդիսանում երկրորդը, ըստ որի հնդեվրոպական լեզվաընտանիքում հայերենն առանձին ճյուղ է և այդ ընտանիքում նրա ամենամերձավոր ցեղակիցը հունարենն է:

**Ю. М. ГАБРИЕЛЯН**—Развитие теории Г. Гюбшмана в арменоведении — В известной статье немецкого армениста Г. Гюбшмана «О положении армянского в кругу индоевропейских языков» был окончательно решен вопрос о месте армянского в семье индоевропейских языков. Строго применяя принцип звуковых законов и отграничивая исконно армянскую лексику, он основал теорию о независимом положении армянского языка в кругу родственных языков. Автором настоящей статьи рассматривается дальнейшее развитие теории Г. Гюбшмана в области сравнительно-исторического изучения армянского языка. Он выделяет три основных направления в развитии теории Гюбшмана. Представители первого направления (К. Патканян, К. Бургман, Г. Остгоф, А. Ташян) новыми этимологическими и фонетическими исследованиями подтвердили правоту теории Гюбшмана и поставили эту теорию на еще более прочную основу. Арменисты второго направления (А. Мейе, Х. Педерсен, Р. Ачарян, Э. Агаян, Г. Джаукян, Г. Зольта), кроме того, пришли к выводу, что самым близким из родственных языков для армянского является греческий. Языковеды же третьего направления (П. Кречмер, И. Дьяконов, В. Георгиев, О. Хаас) утверждают, что в и. е. языковой семье к армянскому ближе всех стоит фригийский. В настоящее время преобладающей является точка зрения арменистов второго направления.

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 38:

<sup>47</sup> Георгиев В. И. Исследования по сравнительно-историческому языкознанию, Москва, 1958, с. 138.

<sup>48</sup> Георгиев В. И. Передвижение..., с. 38.

<sup>49</sup> Գ. Զահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, էջ 163—164: